



Ներկայացվել է
«Զինձառայողների ապահովագրության» հիմնադրամի
խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի նիստին (4-րդ նիստ)

**«ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԱՄՓՈՓՈՒՄ.**

«Զինձառայողների ապահովագրության» հիմնադրամի խորհրդի երրորդ նիստից հետո (03 հոկտեմբեր, 2017) կատարվել են հետևյալ աշխատանքները.

I. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

Նախորդ հաշվետվությունից ցայսօր Հիմնադրամի կողմից օրենքով սահմանված կարգով կատարվել են թվով 8 հատուցումներ, որոնցից 5-ը՝ զոհված զինձառայողների, 3-ը՝ հաշմանդամ զինձառայողների:

- Զոհված 5 զինձառայողներից՝
- 4-ը պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինձառայողներ են, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 58 մլն. ՀՀ դրամ,
- 1-ը պայմանագրային զինվորական ծառայության շարքային կազմի զինձառայող, որին հասանելիք հատուցման գումարը կազմում է 70մլն. ՀՀ դրամ,

Հաշմանդամ զինձառայողները՝

- I խմբի 2 հաշմանդամ, ժամկետային պարտադիր զինձառայողներ, շարքայիններ՝ որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 58մլն. ՀՀ դրամ
- II խմբի 1 հաշմանդամ, պայմանագրային զինձառայող, կրտսեր սերժանտ, որին հասանելիք հատուցման գումարը կազմում է 41մլն. ՀՀ դրամ

Ընդհանուր առմամբ Հիմնադրամը մինչ օրս իրականացրել է 33 հատուցում, որոնցից՝

- 27-ը՝ զոհված զինձառայողների
- 4-ը I խմբի հաշմանդամ զինձառայողների
- 2-ը II խմբի հաշմանդամ զինձառայողների

II. ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿՆԵՐ

1. Նվիրաբերությունների հավաքագրում նամականիշերի միջոցով

«Հայփոստ» ընկերության կողմից թողարկված նամականիշերն ապագայում կվաճառվեն նաև ՀՀ ԿԲ «Դրամագետ» խանութում (պայմանագիրը ստորագրման փուլում է): Այս պահի դրությամբ նամականիշերի վաճառքի արդյունքում հավաքագրվել է 2.865.000 ՀՀ դրամ:

2. Նվիրաբերությունների հավաքագրում Հիմնադրամի լոգոն արտացոլող տիպերով ապրանքների վաճառքի միջոցով:

Համաձայն Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի 2017թ.-ի հոկտեմբերի 3-ի «Հիմնադրամի լոգոն արտացոլող տիպերով ապրանքներ ձեռք բերելու կամ ծառայություններից օգտվելու միջոցով նվիրաբերությունների հավաքագրման կարգը հաստատելու վերաբերյալ» թիվ 16 որոշման՝ համաձայնություն է ձեռք բերվել Գուրմե Դուրմե շոկոլադ արտադրող ընկերության հետ, որի արդյունքում

մեկնարկել է Հիմնադրամի լոգոն արտացոլող տիպերով շոկոլադե սալիկների վաճառքը: Տիպերը ամրացվել են «Զինվոր», «Քույրիկ», «Եղբայր», «Հայրիկ», «Մայրիկ» նշագրումով շոկոլադների վրա:

Համագործակցությունը կտևի 6 ամիս:

Համաձայն Ընկերության և Հիմնադրամի միջև կնքված հուշագրի՝ նախատեսվում է, որ շոկոլադե սալիկների վաճառքի արդյունքում Հիմնադրամին նվիրաբերվելու է ընդհանուր առմամբ 500.000 ՀՀ դրամի չափով գումար, որի վճարումը ընկերությունն իրականացնելու է մաս առ մաս՝ 6 ամսվա ընթացքում, յուրաքանչյուր ամսվա 10-ին և 25-ին:

Հիմնադրամը ընկերությանը տրամադրել է իր լոգոն արտացոլող ինքնակաշուն տիպեր՝ շոկոլադե սալիկների վրա փակցնելու նպատակով: Ընդ որում՝ ինքնակաշուն տիպերը տպագրվել են «Զարտապրինտ» ՍՊԸ-ի կողմից ամբողջովին անվճար: Տպագրվել է ընդհանուր թվով 5000 ինքնակաշուն տիպ:

3. Նվիրաբերություններ տերմինալների միջոցով

Արդեն իսկ հնարավոր է նվիրաբերություններ իրականացնել «Թել-Սել» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպության տերմինալների միջոցով:

4. Նվիրաբերությունների իրականացումը բանկային փոխանցման միջոցով

Բոլոր բանկերի կողմից իրականացվել են համապատասխան SS փոփոխությունները: Վերջին ամսվա ընթացքում Հիմնադրամն անհատապես աշխատել է բոլոր բանկերի հետ, որի արդյունքում վերջիններս այլևս տիրապետում են Հիմնադրամին ճիշտ փոխանցում իրականացնելու կարգին:

Համապատասխանաբար՝ բանկային փոխանցումների միջոցով կատարվող նվիրաբերությունները ճիշտ արտացոլվում են կայքում:

5. Նվիրաբերությունների իրականացումը էլեկտրոնային քսակի միջոցով:

«PayPal» էլեկտրոնային քսակը կիրառելու համար անհրաժեշտ է ԱՄՆ-ում գտնվող որևէ բանկում բացել հաշվեհամար՝ ԱՄՆ-ում գործող Հայաստանի հյուպատոսարանի և/կամ դեսպանությունների միջոցով: Ներկայումս վարվում են բանակցություններ որոշ բանկերի հետ և ուսումնասիրվում են վերջիններիս կողմից ներկայացված սպասարկման պայմանները:

III. www.1000plus.am ԿԱՅՔԻ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Կայքի մշակման աշխատանքներ

Նախորդ խորհրդի նիստից հետո իրականացվեցին կայքի մշակման լրացուցիչ հետևյալ աշխատանքները.

- Խոշոր նվիրաբերություններն ըստ մեծության դասակարգելու հնարավորությունը
- Կայքի լեզվի փոփոխության դեպքում նաև հաշվիչների արժույթի փոփոխությունը
- Լրացուցիչ 100,000 ՀՀ դրամ հատուցում ստանալու մասին բացատրական տողի ավելացումը

«Ի պատիվ» և «Ի հիշատակ» նվիրաբերությունների իրականացման հնարավորությունը կիրականացվի մինչև տարեվերջ:

IV. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ - 01 հունվար, 2017 – 13 դեկտեմբեր, 2017

Հատուցումներ	<i>360,050,000</i>	100%
Շարքային և կրտսեր ենթասպա	220,600,000	61%
Ենթասպա	68,650,000	19%
Սպա	70,800,000	20%
Պարտադիր վճարներ	<i>5,274,186,285</i>	
Նվիրաբերություններ	<i>77,419,222</i>	100
Կայքի միջոցով	11,772,418	15
Բանկային փոխանցմամբ	65,646,804	85

Հիմնադրամի՝ ամսական հատուցումների մասով ստանձնած պարտավորություններ

2017	<i>Մահ</i>	<i>1-ին կարգ</i>	<i>2-րդ կարգ</i>	<i>Ընդհանուր</i>
<i>Ամսական վճարներ ընդհանուր 20 տարվա համար 33 դեպքով</i>	<i>1,512,000,000</i>	<i>204,000,000</i>	<i>72,000,000</i>	<i>1,788,000,000</i>
<i>2017 թվին վճարված ամսական վճարներ</i>	<i>36,800,000</i>	<i>4,050,000</i>	<i>1,350,000</i>	<i>42,200,000</i>
<i>Միանվագ փաստացի վճարված</i>	<i>270,000,000</i>	<i>40,000,000</i>	<i>10,000,000</i>	<i>320,000,000</i>
<i>Հատուցված ընդհանուր գումար 33 դեպքով (31.12.17 դրությամբ)</i>	<i>306,800,000</i>	<i>44,050,000</i>	<i>11,350,000</i>	<i>362,200,000¹</i>
<i>Հատուցման ենթակա մոտակա (20-տ) տարիների ընթացքում</i>	<i>1,475,200,000</i>	<i>199,950,000</i>	<i>70,650,000</i>	<i>1,745,800,000</i>

2018	<i>Մահ</i>	<i>1-ին կարգ</i>	<i>2-րդ կարգ</i>	<i>Ընդհանուր</i>
<i>Ամսական վճարներ ընդհանուր 20 տարվա համար 50 դեպքով և 20-տ տարվա համար 33 դեպքով</i>	<i>3,263,200,000</i>	<i>763,950,000</i>	<i>322,650,000</i>	<i>4,349,800,000</i>
<i>2018 թվին վճարվելիք ամսական վճարներ</i>	<i>165,000,000</i>	<i>38,400,000</i>	<i>16,200,000</i>	<i>219,600,000</i>
<i>Միանվագ 50 դեպքով պլանավորվող վճարներ</i>	<i>330,000,000</i>	<i>100,000,000</i>	<i>35,000,000</i>	<i>465,000,000</i>
<i>Հատուցման ենթակա ընդհանուր գումար 83 դեպքով (31.12.18 դրությամբ)</i>	<i>495,000,000</i>	<i>138,400,000</i>	<i>51,200,000</i>	<i>684,600,000</i>
<i>Հատուցման ենթակա մոտակա (20-տ) տարիների ընթացքում</i>	<i>2,768,200,000</i>	<i>625,550,000</i>	<i>271,450,000</i>	<i>3,665,200,000</i>

V. ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ՝ ԸՍՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՄԱԶԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵԿ-ԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ՝ ՆՈՅՏՄԲԵՐԻ 30-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

¹ Այս թիվը իր մեջ ներառում է նաև 2017թ. դեկտեմբեր ամսվա 2-րդ կեսին իրականացվելիք հատուցումների գումարը:

1	<p>Մույն թվականի հոկտեմբեր եւ նոյեմբեր ամիսներին Հիմնադրամի տնօրենի, աշխատակիցների, ինչպես նաեւ Հոգաբարձուների խորհրդի անդամների կողմից իրականացվել են այցելություններ Հիմնադրամի կողմից հատուցում ստացած 21 ընտանիքիների:</p>	Կատարված է
2	<p>Պայմանավորվածություն է ձեռք բերվել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի եւ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ, համաձայն որի՝ վերջիններիս հաճախորդ Հիմնադրամի շահառուները հնարավորություն են ստացել ելքագրել միանվագ, ինչպես նաեւ ամսական հատուցումների գումարը ՀՀ-ում գործող Առքա համակարգի անդամ այլ բանկերի կանխիկացման կետերից եւ բանկոմատներից առանց միջնորդավճարի գանձման: Առքա համակարգի անդամ չհանդիսացող այլ բանկերի կանխիկացման կետերից եւ բանկոմատներից գումար ելքագրելուց կպահվի համապատասխան միջնորդավճար, սակայն հաջորդ աշխատանքային օրը այն կվերադարձվի շահառուի հաշվեհամարին:</p>	Կատարված է
3	<p>Պատրաստվել է ՊԵԿ-ի և Հիմնադրամի միջև փաստաթղթաշրջանառությունը (դրոշմանիշային վճարներ վճարողների ցուցակների փոխանակումը) առավել դյուրին դարձնող էլեկտրոնային համակարգ (Web Service).</p>	Նախատեսվում է համակարգը գործարկել 2018թ.-ի Հունվար ամսից:

4	<p>Վերադարձերի համակարգի ստեղծում: Հունվար-փետրվար ամիսներին դրոշմանիշային վճարների վերադարձ կազմակերպելու համար (երկու կամ ավելի գործատուների մոտ աշխատելու դեպքում, պարտադիր ժամկետային ծառայության մեջ գտնվող կամ զոհված որդի, ամուսին, եղբայր ունենալու դեպքում) ՀՀ ԿԲ-ի կողմից ներկայացվել է ՀՀ Կառավարության 86-Ն դրոշման փոփոխությունների նախագիծ:</p>	<p>Նախագիծը ներկայումս քննության փուլում է:</p>
---	---	---